

Նաւարանոտի մը բռնկիլն .

Յունուարի դիշեր մը ժամն երկուքին՝ թնգանօթի կրկին հարուածներուն և հրդեհի նշան զանգակին ձայնէն դուլոնի քաղաքացիք յանկարծ արթընցան, նաւարանին մէջ մեծ վտանգ մը կը գումէին :

Այս ձայներս՝ Սանդի-Բեղրի ըսուածնաւէն էին, որ շարժական բանտ էր ծովուն վրայ՝ և բոնկեր էր. մէջն ութ հարիւր կալանաւոր կային: Նաւուն վեր նայարկը բարակ փայտերով շինուած էր, և վրայի կողմն ալ լաթեղինով գոցած, որ արևուն ճառագայթներուն տակ կիր դարձեր էր, անոր համար շուտ մը բոց առաւ և այրելով նաւուն ամբարանոցին վրայ կործանեցաւ, ուր մէջրաչափ բարձրութեամբ խծուծ դիզուած էր, որոնք աղէկ մը ձիւթուած ըլլալով՝ կայծ մը բաւական էր բոլորն ալ մէկտեղ բուրնկցնելու: Նաւն նաւարանին մէջ անկիւն մը խարիսխ ձգած էր Միւրոն անուամբ ծովագետական նաւուն հետ, մէջի ութ հարիւր դատապարտեալ կալանաւորները՝ առաջիկայ ահազին մահուընէ զարհուրած, զետին փուուած մնացեր էին, և հիւսիսային արևմտեան ցուրտ և բուռն հովս ալ մէկ կողմանէ կը զրդոէր կը ծաւալէր կրակը. կրնայ դիւրաւ գուշակուիլ ինչ մեծ վտանգ կը սպառնար նաւարանին: Սակայն նաւաստեաց արթնութեամբը՝ մարդ չկորսուեցաւ, և մեծ վնաս մըն ալ չպատահեցաւ. առաւուեան ժամը չորսին կրակն նուաճուած էր: Այս դէպքս, կ'ըսէ գաղղիացի օրագիր մը, նաւաստեաց կարգաւորութեան արդիւնաւոր յաղթանակ մը եղաւ. վասն զի այնպիսի ահազին հըրդեհի մը առջև իրաւամբ կրնար մարդկային կարողութիւնն և ջանք յուսահատիլ:

Ժամը վեցին դեռ կը մխար, այլ վրտանգն բոլորովին անցեր էր: Հրդեհն՝ յայտնի կ'երեայ որ անհոգութենէ և կամ չարութենէ առաջ եկած չէ. այլ

մերձակայ շոգեշարժ գործարաններուն ծխհաններէն ելած կայծերն՝ դեռ չիմարած, հովին բռնութեամբ նաւուն վրայ գալով պատճառ եղած են այս հրդեհիս: Թէպէտ ասկէ առաջ պատահած՝ եռայարկ նաւուն մը այրիլն ցուցըցեր էր՝ նաւերը լաթով պատելուն վնասը՝ այլ կը յուսացուի որ այս վերջի վտանգը՝ բոլորովին խափանել տայ այդ սովորութիւնը:

Երկոյեան ժամը վեցին, Սանդի-Բեղրի նաւարանին մէկ կողմը բերուեցաւ, ուր իրեք հարիւր աշխատաւոր պատրաստուած էին երկրորդ օրը քակելու զնաւը:

Գող մը՝ որ իր գող լլլալը չգիտեր.

Հարուստ խաթունի մը անէն երկար ատենէ՝ ի վեր գողութիւններ կը հանդիպին եղեր. խաթունը շատ ետևէ կ'իյնայ որ գողը գտնայ՝ բայց անօգուտ: Վախնալով որ ծանրագին ստացուածքներն ալ չգողցուին, տանը մէջ ծածուկ տեղ մը կը պահէ. բայց զարմանքով կը լցուի՝ երբոր կը տեսնայ երկրորդ օրը որ գողը այն ծածուկ տեղն ալ գտեր և մէջինը վերուցեր է:

Այս միջոցին տուն կը դառնայ խաթունին մէկ տղան որ ճամբորդութեան եղեր է եղեր. լսելով մօրմէն եղած գողութիւնները՝ կ'ենթազրէ որ հարկաւտանը ծառայներէն մէկը պիտի ըլլայ. ուստի փորձի համար բաւական արժէք ունեցող նիւթ մը մօրը հետ կը տանին տանը անկիւն մը կը պահեն. և տղան ատրճանակ մը առած առանձին մնութ տեղ մը կը պահուըտի: Գիշերը կը հանի և կէս ըլլալու միջոցները՝ տղան ոտքի ձայն մը կը լսէ մութին մէջէն՝ որ դէպ ՚ի այն անկիւնը կ'երթար. մէկէն ատրճանակը կը պարպէ, և անոր լուսովը կը տեսնայ և կը ճանշնայ գողը՝ որ իր մայրն է եղեր, որ գիշերաշրջիկ ըլլալով՝ ամեն գիշեր քունին մէջ կ'ելլայ ցորեկուան պահած բաները կ'առնէ և ուրիշ տեղ մը կը պահէ եղեր առանց ի մանալուն: